8. Աղքատ ննջեցելոց թաղման համար . . . . . . . . . . 13 ռ. 22 կ.
9. Թղթի, ապահովագիր կամ հաշիւ տպելու համար և այլ կարևոր ծախս մնում է ապառիկ դրամ . 16 ռ. »
Եւ Գանձապետի մօտ մնում է պատրաստ գումար *) . . . . . 468 ռ. 57 կ.

Գումարն է 1113 ռ. 3 կ.

Հաշուետուութենից յետոյ բոլոր Անդամները շնորհակալութիւն արին Հոգաբարձուներից, որոնք ջերմեռանդ և ճիշտ կերպով առաջ են տարել այդ գործը. Ընտրեցան այս անգամ 6 հոգաբարձուք — Թ. Աւագ քահանայ Բուդաղեանց, և հետևեալ պարոնայքը — Գ. Դիլբարեանց որ և գանձապետ, Բ. Սարգիսեանց, Մ. Շահկեդանեանց, Ց. Աղամեանց, և Խ. Կիրիեանց.

Արդէն բացված է ստորագրութիւնը, որի հետևանքը ինչ կլինի, ժամանակին կարող ենք հաղորդել. Սակայն, յուսալի է, որ Բագուաբնակ Հայերը այդ աղքատասիրական գործը, ինչպէս սկսել են ջերմեռանդութեամբ, և այսուհետև իւրաքանչիւր տարի յառաջ կտանեն նոյն սիրովը. աչքի առաջ ունենալով անցած տարիներում, հայ աղքատների դռնէ ի դուռն թափառելը, նա մանաւանդ և եկեղեցիների դռներում խմբովին կանգնելը մուրացկանութեան համար, որ կարծես թէ մէկ նախատինք էր հարկանվում զգացողների երեսին. Բայց այժմ չէ տեսանվում ոչ եկեղեցիների դռները շրջապատած դրանցով և ոչ քաղաքի մէջ դռնէ ի դուռն թափառելիս.

Երանի թէ ամեն հայաբնակ քաղաքներում և այս նպատակաւ կազմուէին ընկերութիւններ, որ ցանկալի և սիրելի են Աստուծոյ և մարդկան.

13 ապրիլ Յովհաննէս Միրզաբէգեանց

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ապրիլի 26-ին հայ դերասանական խումբը ներկայացրեց Թիֆլիսի մեծ թատրոնում «Արշակ բ.» ողբերգութիւնը, հեղինակութիւն Խորէն Գալֆայեանի. Այդ տեսակ գրվածքում, որ զուրկ է ամեն բեմական յատկութիւններից, լի երկար, ձանձրալի դիալօգներով, անբնական երևոյթներով, որ զուրկ է՛ և պատմական ճշգութիւնից, որի միակ արժանաւորութիւնն է արտաքին ձևեր, չքեղութիւն և մի քանի ջերմ խօսքեր — այդ տեսակ գրվածքում ամենալաւ դերասանին դըժուար է ցոյց տալ իր բոլոր ընդունակութիւնը. Ուստի մենք չենք կամենում մեր դերասանների և դերասանուհու խաղի վրա խօսելու, այլ անկեղծ կասենք միայն որ երգերը իրանց նորութեամբ, համեմատաբար լաւ պատրաստութեամբ և մինչև այժմ հայոց բեմի վրա չեղած կանոնաւոր ներդաշնակութեամբ ճշմարիտ ուրախութիւն պատճառեցին թէ մեզ թէ ամբողջ թատրոնին. Այդ բանում մենք բացի մեր սեփական կարծիքից, մեզ արձագանք ենք անում հասարակական կարծիքի.

⁂

Այս օրերս մեր քաղաքին այցելութիւն արաւ մեր ազգային բանաստեղծ Ռափայէլ Պատկանեանը, որ տեղիս հայ երիտասարդութեան և ընտանիքների կողմից համակրական ընդունելութիւն գըտնելով, մի քանի օրից յետոյ վերադարձաւ իր բնակութեան տեղը Նոր-Նախիջևան քաղաքը.

⁂

Գօրուց գրում են մեր լրագրին՝ ինչպէս ամեն տեղ, նոյնպէս և այստեղ նկատելի է որ աղջիկների ուսումնարանը աւելի առաջադիմութիւն է անում քան թէ տղայոց դպրոցը. Աղջկերանց այդ ընդունակութիւնը աւելի շուտ ենթարկվել լուսաւորութեան ազդեցութեանը գուցէ կարելի է վերաբերել կանանց սեռին յատուկ փափուկ և դրսի ազդեցութեանը հպատակող բնաւորութեանը. Երկու ուսումնարանների թէ հոգաբարձուները թէ ուսուցչուհիները և ուսուցիչները մեծ եռանդով են աշխատում. Ցաւալի է միայն, որ ժողովուրդը աւելի փող է մսխում մայր եկեղեցու գմբէթի նորոգութեան վրա, քան թէ նրա գաւթում գտնվող մի սենեակից բաղկացած աղջկերանց ուսումնարանի վրա.

⁂

Այս հինգշաբթի օրը մեր հայ-դերասանները պիտի ներկայացնեն առաջին անգամ հայերէն լեզվով Շիլլէրի «Աւազակներ» դրաման. Թարգմանութիւնն պ. Լալաեանց է արել.

⁂

Այս օրերս վախճանվեցաւ Թիֆլիսում Աւէտիք Սվէչնիկեանցը. Ապրիլի 29-ին կատարուեցաւ հանգուցեալի թաղման հանդէսը. Հանգուցեալը Լէֆէնդեանցի երեք կտակակատարներից (միւս երկուսը — Գ. Իզմիրեանց և հանգ. Գ. Ց. Միքայէլեանց) մէկն էր. Նրա դագաղի վրա կարդացած ճառի մէջ, պ. Ց. Զիգիանեանը (Լէֆէնդեանցի հաշվով Արտասահման ուղարկված երիտասարդներից) ցոյց տուեց, որ հանգուցեալը, բացի էն, որ որ նա, իբրև մարդ սկզբից մինչև իր մահուան օրը անկեղծ, անբիծ, և կարողութեան չափ քաղաքիս չահուէտ կեանք է վարել, իր՝ միւս կտակակատարաց հետ միասին, կրած տասնամեայ նեղութիւններից ճիշդ ու հաւատարիմ ազգօգուտ ծառայութեան փոխարէն արժանի է, որ հայ հասարակութիւնը յարգէ նրա յիշատակը. Պարոնը մէկ բարոյական պարտականութիւն ու իրաւունք համարեց, թէ իր և թէ իր բացակայ ընկերներն (Լ.Ֆ. միւս ուղեցիլների) կողմից, հանգուցելոյս (և միւս երկու ընկերների) հայրական հոգացողութիւն ու երախտեաց մասին, սրտին խորին շնորհակալութիւնը յայտնել, խոստանալով նրա անունը իրանց մէջ միշտ անմոռանալի պահել.

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՄԱՆՈՒԿ ԹԻՒՐՔԻԱՆ ԵՒ ՅԵՏԱԴԵՄ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Ժողովրդական առածը ասում է՝ „լսել ես թէ Ալին մեռել է, բայց չես իմացել ո՞ր Ալին…"

Թիւրքիայի երիտասարդութիւնը, որ առհասարակ շատ փայլի վերոյ, թեթև կրթութիւն է ստանում, մեծ մասամբ Փարիզի բուլվարներում, սրճարաններում ու թատրոններում իր բարձր կրթութիւնը ստանում, վերադառնալով իր հայրենիքը կամենում է գործ դնել Փարիզում տեսածն ու լսածը, առանց մտածելու յարմար են արդեօք կոմունիզմի ու սօցալիզմի վրա Փարիզի ժողովրդական կարմիր կլուբներում յայտնվող գաղափարները այնպիսի մի ազգի մէջ մտցնելու, ինչպէս տաճիկ ժողովուրդը, որտեղ չը կայ ու՛ ինքնուրոյն կեանքը, որ չունի իր անցեալը, որ իր զարգացմամբ ստոր է հպատակ ազգութիւններից.

Դեռ 1867 թուին կազմուեցաւ մի խումբ երիտասարդների „Մանուկ Թիւրքիայ" անունով, որի ուղղութիւնը մի խառնուրդ էր սօցիալիզմի ու կոմունիզմի մտքերի տաճկին յատուկ մահմետական խաւար մոլեռանդութեան և սաստիկ ատելութեան հետ դէպի եւրոպական կրթութիւնը. Նորա Փրանսիական ուսումից միայն ըմբռնել են ծայրայեղ կլուբների վարդապետութիւնը՝ թէ ժամանակակից կրթութիւնը անբարոյական է և անիրաւ ու մեծ եռանդով սկսել են ամեն բան քանդել… Այդ կուսակցութեանը պատկանող անդամներից շատերը պատժվեցան, աքսորվեցան, բայց յետոյ դարձեալ յետ կանչվեցան և տէրութիւնը շնորհելով նրանց ներողութիւն, շատերին կրկին բարձրացրեց մինչև մեծ պաշտօնները…

Այդ ժամանակից սկսած, փոքր ինչ ուժ ստանալով, յիշեալ կուսակցութիւնը հիմնեց իր սեփական օրագրութիւնը որ արձագանք դարձաւ նրա գաղափարների. Օրագիրներից գլխաւորները երեք էին՝ „Բասիրէթ" որ յանձն առաւ բարոզել ժողովրդին կրօնական մոլեռանդութիւն և ատելութիւն դէպի եւրոպական կրթութիւնը և գիտութիւնը, — „Սիրաջ" յանձն առաւ տարածել քաղաքական հանրապետական մտքերը և վերջապէս „Իբրէթ" լրագիրը գրգռելով ժողովրդի կրքերը, բարոզում էր կօմունիզմ: Այս խմբագիրը Քէմալ-բէյ, 1867 փախած էր Փարիզ, յետոյ 1872 նրան թոյլ տրվեցաւ վերադառնալ իր հայրենիքը. Այդ լրագիրը յաճախ ստանում էր նախազգուշութիւններ և արգելվում էր. Ինչպէս հաղորդում Kölnische Zeitung լրագիրը Քէմալ-բէյ հեղինակեց ներկայումս մի դրամա „Հայրենիք" անունով, որի նիւթն էր 1854 թուի Սիլիստրիայի պաշտպանութիւնը: Ներկայացման ժամանակ, այս մարտի 24-ին թատրոնի մէջ գտնվող հասարակութեան ոգևորութիւնը հասաւ անասելի աստիճանին. Ունկնդիրները այնպէս էին ողջունում, ինչպէս միայն Սուլթանին սովորութիւն ունեն ողջունելու: Մի և նոյն ժամանակ „Իբրէթ" լրագրի ուրիշ մի աշխատակից ներկայացնում էր տէրութեանը մի պրօէկտ, որի միտքն էր Ռուսաստանի վրա յարձակվել կամաւոր զօրքի օգնութեամբ, իսկ 200 հազար ժողովրդական միլիցիայի օգնութեամբ կոտորել Թիւրքիայում գտնված բոլոր այլազգի բնակիչներին.

Բայց այդ երևելի յեղափոխական մտքերը, որք 'ի հարկէ պատիւ պիտի անէին փարիզում ուսում առած այդ ժամանակակից մոնղոլներին, պատիւ պիտի անէին նրանց հաւաքված բարբարոս պապերի յիշատակին, — բարեբախտաբար այդ մտքերը չիրագործվեցան՝ թատրոնական ներկայացման գիշերը մարտի 24-ին, տէրութեան հրամանով կալանաւորեցին „Իբրէթ" լրագրի գլխաւոր խմբագրին Քէմալ-բէյին, պատասխանատու խմբագրին, չորս աշխատակիցներին, որոնց թւում և երևելի պրօէկտի հեղինակին, որի անունն է Էհմէդ-Միթհադ-Էֆէնդի, յետոյ „Սիրաջ" լրագրի խմբագրին և թատրոնի դիրեկտորին: Իսկ մարտի 28 այդ բոլոր կալանաւորվածները ուղարկվեցան աքսորանք՝ Կիպրոս, Ռօդոս և այլ տեղերը.

Ուրեմն այս անգամն էլ չաջողվեցան լուսաւորված մոնղոլների խաւար յեղափոխութեան նպատակները: Շատ կարելի է որ Թուրքաց տէրութիւնը սրտով համակրում էր այդ փայլուն յեղափոխութեանը, — բայց կամայ ակամայ արգելում է այդ տեսակ ձգտումներին, հպատակելով եւրոպական պետութիւնների դիպլոմատիայի ազդեցութեան. — Խեղճ մոնղոլը, ուզես չուզես, պիտի ցոյց տաս որ լուսաւորված տէրութիւն ես…

## ՆԱՄԱԿ ՄԵԼԻՏԻՆԷԻՑ

### Ա.

Պատմութեան մեզ տուած տեղեկութեանց նայելով՝ Մելիտինէն Հայի կենաց մէջ դեր խաղացող քաղաքներից մէկն է եղած. Նորան գոյութենէն մինչև օրս, իբրև հայաբնակ քաղաք, չնայելով անոր կրած անթիւ վշտերին, նա իւր մէջ ունեցել է միշտ և ունի բազմաթիւ Հայ գերդաստաններ, որոնք վաղուց է մոռացուածի պէս են Թուրքիոյ կեդրոնի, Կ. Պօլսի Հայոց համար. Միայն և եթ լուտերական, քաթօլիկ և լաթին որսորդները չեն մոռացած նորան՝ ինչպէս կտեսնուի յօդուածնուս ընթացքի մէջ.

Մելիտինէ (այժմ Մալաթիայ) քաղաքը փոքր Հայաստանի երրորդ Հայք կոչուած նահանգին գլխաւոր քաղաքն էր, որնոր այժմ ալ այն տեղերումը գրեթէ նոյն նշանակութիւնն ունի. Անոր արևելեան կողմէն չորս ժամուայ ճանապարհի հեռաւորութեամբ կանցնի Եփրատ (այժմ Մուրադ) գետը՝ որ մեծ ու փոքր Հայաստանի սահմանը կկազմէ. Այս նշանաւոր գետը Մելիտինոյ նահանգի բնակչաց գրեթէ անօգտակար է՝ բաւական խորին կերպով երկրի մակերևոյթի ցածէն անցնելուն համար.

Երկրորդ Հայք կոչուած նահանգի (այժմ Սըվազ Վիլայէթը) հարաւային սահմաններէն Մելաս գետը (այժմ Թոխմայ) ամբողջ Մելիտինոյ նահանգի հիւսիսային սահմանների երկարութեամբ՝ արևմուտքէն դէպի արևելք ձգուելով՝ Եփրատին մէջ կթափի. Այս գետը, որ նոյնպէս Մալաթիայէն չորս ժամուայ ճանապարհի հեռաւորութեան վերա կգտնուի, բոլորովին այլ նշանակութիւն ունի այս նահանգի բնակչաց համար. Նա՝ միայն և եթ Մելիտինոյ նահանգին մէջ, եթէ չասենք հազարաւոր, գոնէ հարիւրաւոր գիւղերի կեանք տուողն է. Այնտեղի բոլոր բնակչաց մէջ առած է դարձած թէ «Թոխմայի ափերին ոսկի ալ ցանես կը բուսնի». Խարբերդ, Պեսնի, Ադիեաման, Դիվրիկի, Փալու, Չունկուշ, Ակն, Արաբկիր, Սըվազ, Ղայսարի, Հեգիմխան և այլ շատ քաղաքներ ու գիւղեր գնացած անհատնում բրինձները անոր ջրե-

զօրանին, նոքա, թէ կրօնքի կողմից և թէ ծէսերի կողմից, ունեցան առանձին հայեացք, որը զանազանում է նորանց բոլոր արևելեան մատենագրերից, տալիս է նորանց խիստ ինքնուրոյն բնաւորութիւն, բաց անելով նոցա առջև քննութեան նոր ճանապարհ և տարաւ նորանց դէպի նոր հետազօտութիւններ.

### II

### Հայոց լեզուն

Մինչև համեմատական փիլօլօգիայի նոր մեթոդի ստեղծուելը, հայոց լեզուն խիստ սակաւ էր հետազօտուած և գիտնականները չը գիտէին, թէ լեզուների ո՛ր ցեղին պէտք է դասաւորել նորան. Գտանում էին մի քանի ազգակցութիւն նորա և Պարսից ու Յունաց լեզուների մէջ, բայց այդպիսի նմանութիւնը համարում էին պատահմունքներից, կամ այդ ազգերի հետ հաղորդակցութիւնից յառաջ եկած, բայց ոչ ոք չէր քննադատում նորան քերականական և պատմականական կողմից. Մի քանի ազգասէր հայեր աւելի ջերմեռանդներ, քան թէ գիտնականներ, հաստատում էին, թէ նոցա լեզուն ամենահինն է, այլ և այն բարբառն է, որով Նոյը խօսում էր իւր տապանում, կային և այնպիսի միամիտներ, որք ընդունում էին այդպիսի կարծիքը որպէս հաւատքի հանգանակ, որ քարոզվում էր սուրբ գրքից. Այդ երևակայութիւնները, որպէս բոլոր երևակայութիւնքը հին ըշխօլայի լեզուագէտների, ցրուեցան արհեստի լուսոյ առջև. Մեք այժմ գիտեմք, որ հայոց լեզուն է մի չափով աւելի հին, և բարբառների մեծ ցեղի մէջ աւելի լաւ քան թէ միւսները պահպանում Արիական լեզուի, որ է ժամանակակից նախնական Զենդի, որոյ հետ նա ունի մօտաւոր ազգակցութիւն, այլ և, Բոպպի կարծիքով, կարելի է իւր ֆօնետիկային (բառակազմական) զարգացման մէջ նախնիթաց էր քան այդ լեզուն. Հայոց լեզուի կազմակերպութեան օրէնքների գիտութիւնը տալիս է մեզ կարողութիւն հասնել մինչև սկզբնական գոյութիւնը և նախնական ձևակերպութիւնը այն բարբառի, որ գործ էր ածվում Պարսկաստանում, Աքեմենիտների ժամանակում. Այդ բարբառները, անդադար աւերվելով, ըստ ասութեան Մաքս Միւլլերի, հետևելով ֆօնետիկական (բառակազմական) աղաւաղութեան օրէնքներին, բազմանում էին և այդպիսեաւ բաժանվում էին ժողովրդական բարբառների. Եփրատ գետը բաժանում էր այդ բարբառները երկու գլխաւոր խումբերի — արևմտեան և արևելեան, բացի այդ երկու խումբերը, կային և երկրորդական աստիճանի բարբառներ, որք ձևակերպուեցան բաժանմունքների, կամ ազգի կտրատուելուց զանազան մանր ժողովրդական միութիւնների, պատճառաւ. Ինչ ձևով կատարվում էր այդ բաժանմունքը. Հալածուելով և աւերուելով անդադար արշաւանքներից, ենթարկուելով օտար տիրապետողների և բարբարոսների իշխանութեան ներքոյ, Հայերը սկսեալ տասն և հինգերրորդ դարից սկսեցին գաղթել հայրենի երկրից. Նոքա դիմեցին զանազան կողմեր, որպէս դէպի Ասիայ, նոյնպէս դէպի Եւրոպա. Ամենատեղ ուր և բնակվում էին — Հայերը ընդունում էին իւրեանց ապաւինական երկրի օրէնքները, նորա սովորութիւնները և լեզուն, բայց երբէք կատարելապէս չը խառնուելով տեղային բնիկ ժողովրդի հետ. Այդպէսով մեք տեսնում եմք նորանց ցրուած Ասիայի մէջ, — անդրկովկասեան նահանգում Ռուսիոյ տիրապետութեան ներքոյ, Տաճկաստանում, Պարսկաստանում և անգղիական Հնդկաստանում. Եւրոպայի մէջ — միջին և հարաւային Ռուսաստանում, Լեհաստանում և Աւստրիայի արևելեան նահանգներումը. Հայկական ցեղին յատկանիշ ձըգտողութիւնքը դէպի վաճառականութիւն և առհասարակ դէպի դրամական շրջանը՝ տարան նորանց աւելի հեռու՝ մինչև Հնդկական արշիպելագը, Ասիայի սահմանները և մինչև անգամ դէպի աւելի խորքը այդ ընդարձակ ցամաքահողի, այնպիսի տեղեր, որ տակաւին անմատչելի էին եւրոպացիներին, ուր նորանց յաջողուեցաւ բնակիլ և պարապուել առևտուրով. Ենթարկուելով այդ կողմերի սովորութեանց, բնաւորութեանց և լեզուի ազդեցութեանը, հայերը մնացին հաւատարիմ, որպէս Իսրայէլի որդիքը, դէպի իւրեանց կորցրած հայրենիքի յիշատակները, նոքա չը մոռացան նախահարց երկիրը. Նոքա պահպանեցին իւրեանց կրօնքը և իւրեանց հին գրականական և եկեղեցական լեզուն, որպէս սրբութիւն իւրեանց քանդուած ազգային ամբողջութեան, որպէս վերջին կապ, որ միաւորում էր բաժանուած եղբայրները. Հայոց լեզուն վաղուց արդէն դադարեց գործածութիւնից որպէս խօսակցութեան լեզու (?) բայց պատմական նշանակութիւնը այդ լեզուի և գրականական յիշատակարանների բազմութիւնը, անում են նորան անմահ. Արդարև, հայոց լեզուի բարբառները դեռ ևս կենդանի են, բայց նոքա չեն անցնում ընտանեկան օջախի սահմանիցը դուրս. Գերդաստանից դուրս արտաքին հաղորդակցութեանց համար, հայերը գործ են ածում իւրեանց բնակած երկրի լեզուն.

Կը շարունակուի.

---

*) Յիշեալ գումարից այս զատկին Հոգաբարձուք սկսեցին բաժանել աղքատաց.

րին են պատկան։ Անոր եզրներին մօտ կգըտնենք Ծոփաց աշխարհին (այժմ Տիարպեքիր Վալէյէթը) մէջ հռչակուած ձմերուկները և սեխերը։ Արդէն յիսուն տարուց աւել է նոցա ափերին մօտ բամբակ ու տորոն ցանուելով՝ ազնիւ ազնիւ տեսակները կարտադրուին։ Սակայն մինչև օրս՝ ոչ տէրութիւնը և ոչ ժողովուրդը այդ բերքերէն շահուելն կամեցած է։ Այդ արդիւնաբերութիւնք այդտեղ նեղ և անձուկ շրջանի մէջ են. և այնքան գրեթէ կմշակուին, որքան բնիկներին համար հարկաւոր են. ըստ որում այդ երկիրը՝ ամենայն կողմից գրեթէ առանձնութեան մէջ ապրելով՝ շարժում սակաւ ունի։ Վաճառականութիւնը նահապետական կացութեան մէջ է. օրինաւոր ճանապարհներ չկան. կառք ասած բանի ամէն տեսակներն ալ անծանօթ են այս նահանգին։ Երկու երեք տարի է որ այդտեղ հաստատուած է նամակատարներ (poste) ի հարկէ ըստ արևելեան սովորութեան և հեռագիծը։

Թոխմային վերա կայ քարաշէն նշանաւոր կամուրջ մը 40 կամարների վերայ հաստատած, որուն այժմ 24 աչքերէն միայն ջուր կանցնի։ Այս երևելի կամուրջը, զոր տեղացիք քըրխ կոզ (40 աչք) կը կոչեն, իր վերա բնաւ արձանագրութիւն չունի։ Բնակչաց աւանդութիւնը նորան շինութիւնը Սուլթան Մուրադ 1 կը տայ։

Մելիգինէից մի օրական ճանապարհ դէպի արևմուտք կայ մի ուրիշ օգտակար գետակ Սուլթանսու անուամբ, որ իր սկիզբը Աղճատաղայ լեռներէն առնելով՝ և Քերեմիսի ձորերի ու նշանաւոր Խօրենայ դաշտի հարաւային ափերէն անցնելով՝ Թոխման կը թափի։ Այս դաշտին մէջ ժամանակով եղած են գիւղեր և Սուլթանսուի մեծ մասն ալ առանձին առուակով անոր մէջէն անցեր է։ Սակայն նա Աղճատաղայ լեռան առաջն լինելուն համար, նորա բնակիչները, որոնք զուտ Հայք եղած ըլլան, այն լեռան Քրդերի նեղութենէն և երկիւղէն ցրուելով, գետակն խանգարուեր էր։ Քանի մը տարի առաջ նշանաւոր զօրապետ Ռաշիդ բէկը նուաճելով այն քրդերը, այդ դաշտին մէջ զօրաց ձմեռանոց շինել տուաւ, աւրուած առուակը կրկին նորոգուեցաւ, հիմնուեցան տասնի չափ գիւղեր, որոնց մէկի բնակիչները Խարբերդի գաւառէն գաղթած Հայք են։

Այստեղ հաստատուած են այժմ երևելի Թագաւորական կալուածատեղիք (Չիֆթլիք), զորս կը մշակեն զօրքերը, ուր կը լինի մեծ քանակութեամբ բրինձ և այլ բերքեր, որոնցով կը կերակրուին Տիգրանակերտի, Սեբաստիոյ և Կարնոյ կուսակալութեանց մէջ եղած բնակիչների մեծ մասը։

Մելիգինայից դէպի արևմուտք չարուձակ հինգ ժամուայ ճանապարհ գեղեցիկ այգիներ են, որոնք սեպհական են այլ և այլ գիւղերի և որոնց վերջինը Քունդուրեկ կը կոչուի։ Այս գիւղին մօտիկ և նորան հարաւային կողմն եղած լեռան ստորոտէն հոսած բազմաթիւ ջրերը մեծկակ գետ մը կը ձևացնեն, զոր Դերմասի Սուի կը կոչուի։ Այս գետը նոր Մելիգինոյ հարաւային կողմն եղած տների և այգիների առաջովը կանցնի, իսկ հին Մելիգինոյ մէջէն և բոլորաւոր այգիները ընդօրս և հին Մելիգինոյ անհամանում հողերը անոր ջրերով կոռոգուին։

Մելիգինոյ նահանգը առաւել դաշտային երկիր է, քան թէ լեռնային. նա ունի Տաւրոսի ճիւղերից երկու գլխաւոր լեռներ, որոնց մէկը քաղաքի արևելեան հիւսիսային կողմն է որ Աղճատաղ կը կոչուի։ իսկ միւսը հարաւային գիծն ձգուած, որ Պեկ կամ Մելոքան-տաղի կանուանուի։ Ասոնց երկուսի վերա ալ կան շատ նշանաւոր ամարանոցներ, որոնց աշխարը, եղը, պանիրը, մեղրը խիստ գովական են, զորս կը տանեն Հիլապ, Շամ, Ուրֆայ և այլ շատ քաղաքներ. իսկ մեղրը առաւել կ. Պօլիս։ Այս լեռներումն շատ կան նոյնպէս բուրդ, գլոտոր, չիրեշ, քիթրայ, մի տեսակ խոտից հանած ծամոն, որոնք նոյնպէս կարավանով կը գնան կ. Պօլիս Հալեպ և Պէլենկի նաւահանգիստը։

Մելիգինոյ նահանգին մէջ հանքային ջրեր բնաւ չը կան, իսկ հանքերի կողմէն մի պղինձի և մի քանի տեղ ալ բորակի հանքեր յայտնի են. Առաջինը Մելոքանու լեռան վրա եղած Ջանիպեկ գիւղի մօտ է, իսկ երկրորդը՝ Եփրատի մօտերքը ձգուած Շուրայ և Իզօղլի կոչուած քրդաբնակ գաւառների մէջ են։ Այժմ այս երկու հանքերն ալ երեսի վերա ձգուած են։ Ասկէ քանի մը տարի առաջ, այժմեան Սեբաստիոյ կուսակալ Հաճի Իզզէթ փաշան Խարբերդու կառավարիչը, փորձ փորձեց այդ պղինձի հանքը մշակել տալու։ Ուստի բերուեցան կ. Պօլսէն վարպետներ և գործը ըսկըսուեց։ Սակայն երեք տարի այդ ձեռնարկութիւնը շարունակելէն յետ նորէն դադարեց։ իսկ ինչ կը վերաբերի բորակի հանքերին, մինչև օրս՝ նորանց վերայ ոչ ուշադրութիւն դարձրած է և ոչ ալ դարձնող կայ։ Միայն այնտեղի քրդերը՝ նորանից առատ վառօդ շինելով՝ ազեկ միմեանց կը կռուերին, աւազակութիւն, գողութիւն և այլ վայրենութիւններ կանեն։

Յակոբ Գ. Կարապետեանց։

## ՆԱՄԱԿ ՎԻԷՆՆԱՅԻՑ

Աշխարհահանդէսն դեռ պատրաստ չէ և կը բացվի միայն մայիսի 1-ին, այնպէս որ ոչոքին չեն թոյլատրում շինութեան մէջ ներս մտնելու։ Անցեալ օրն ես ինչպէս մասնակից ռուսաց բաժնի, տոմսակով ներս գնացի։ Ռուսաց բաժինը լաւ տեղն է նշանակված։ Ուղղակի շինութեան մէջ ապրանք բերելու համար երկաթուղի է շինած, իսկ քաղաքի միջից աւելացրած է ձիու երկաթուղին մինչև Պրատէրը ժողովրդի երթևեկութիւնը հեշտացնելու համար։ Նոյնպէս կայ և օմնիբուսի ընկերութիւնը։

Անցեալ օրը հանդէսին այցելութիւն արաւ ռուսաց մեծ իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչը։

Որովհետև հանդէսը դեռ ևս բացված չէ, կը հաղորդեմ ձեզ քանի մի տեղեկութիւններ Վիէննայի լուրերից։

Անցեալ օրը Վիէննայի մէջ թունաւորվեց մի գերասանուհի Էմմա Ֆէլկնէր անունով։ Պատճառը այն էր, որ նա ունէր մի սիրական բանկիր, որ երկու օր առաջ յայտնել էր թէ մտադիր է ամուսնանալ մի այլ օրիորդի հետ։

Վիէննայի մօտ մի գիւղում մի մարդ սպանել էր րէվօլվէրով իր կնոջը անզգուշութենից։

«Ատլանտիկ» շոգենաւի կործանված 1038 հոգուց ազատուել են միայն 300 մարդ։

Այս օրերս հասաւ Վիէննա մեր նշանաւոր նըկարիչ Այվազովսկին, իր նկարչութիւնները հանդէսի վրա ներկայացնելու նպատակով։

Այստեղի Մխիթարեան հայրերը ստանում են ձեր «Մշակ» լրագիրը, բայց իմ ստացած համարները կարդացողների աւելի ընդարձակ շրջանին մատչելի են։ Մանաւանդ մեր վաճառականները ուրախանում են, երբ կարողանում են Կովկասից լուրերը լսել։

Առ այժմ վերջացնում եմ նամակս, խոստանալով, որ եթէ ժամանակս ների, դարձեալ կը գրեմ ձեզ։

Ապրիլի 15. Ա. Վարդապետիկեանց

## ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մեր ամբոխը գնահատում է այն, ինչ որ գրաւումէ նրա համակրութիւնը։ Պ. Աւալեանցը «Արշակի» ներկայացման ժամանակ, երբ իր ձայնով, դէմքով և շարժուածքով արտայայտում էր այն ատելութիւն, որով պարսիկ Ալանոզանը ուզումէր ողջ ողջ կուլ տալ բոլոր հայերին,—շատերը հարկաւոր համարեցին սուլել և մինչև անգամ հայհոյել նրան․․․ ինչ էք այդքան չվլացնում ու աղմուկ անում, հարցրի ես իմ կողմը նստած մի պարոնից։—օղ, պատասխան տուեց նա, չը տեսնա՞ր ինչեր ասեց այն մարդը Հայոց վրա։

Կարծես թէ գերասանը մեղաւոր էր, որ ճըշգութեամբ կատարեց իր դերը։

⁂

Ընթերցողի ուշադրութիւնը դարձնումենք ռուս «Судебный Журналъ» ամսագրի յունվար և փետրվար ամսի տետրակում տպված Առևտրական դատարանի մասին յօդվածի վրա (проектъ торговаго судопроизводства) որ բառ առ բառ նման է այն գրվածքին որ հայերէն լեզվով «Մեղու Հայաստանի» լրագրում այդ նիւթի վրա երկու առաջնորդող յօդվածի պէս է տպվել։ Զարմանումեմ թէ ռուս ամսագիրը բառ առ բառ թարգմանելով հայոց թերթից չէ, ցոյց տալիս բնագիրը ընթերցողին։ Բայց աւելի զարմանալին էն է, որ թարգմանութիւնը տպվել է յունվարին և փետրվարին, իսկ բնագիրը ապրիլին․․․

⁂

Մայիսի 1-ին փառաւոր կերպով բացվեցաւ Վիէննայի համաշխարհային հանդէսը։ Ավստրիայի կայսրը, իշխանները և Գերմանիայի թագաժառանգը ներկայ էին։

⁂

Վիէննայի պօլիցան ստացաւ Լօնդօնից ֆօտօգրաֆիական պատկերների մեծ քանակութիւն այն բոլոր գողերի և այլ թէ իգական թէ արական սեռի չարագործների, որք դիտաւորութիւն ունին պատուել իրանց ներկայութեամբ Վիէննայի աշխարհահանդէսը։

⁂

Պ. Մկրտիչ Միհրանեանցը, որի յայտարարութիւնը լիմօնաթ գազէզի և զէլցէրեան ջրի ընկերութեամբ շինելու վրա մեր լրագրումը տպվեցաւ, Սուխում-Կալէ վերադարձած լինելով, այնտեղից խնդրումէ որ մենք հրատարակենք, թէ նրա առաջարկութեան մասնակից լինել ցանկացողները թող բարեհաճեն իրանց կամքը յայտնել նրան նամակով։

⁂

Այս օրերումս Թիֆլիսի Վանքի մայր եկեղեցում կատարվեցաւ մկրտութեան հետևեալ հանդէսը՝ մի թուրք տղամարդ ընդունումէր հայ-լուսաւորչական կրօնքը։

⁂

Ահա մի շաբաթ է, որ Թիֆլիսում օդը անտանելի տաք էր։ Ապրիլ ամսի համար այդ տեսակ տաքութիւնը անբնական էր։ Բաղդաւորապէս մայիսի 2-ին եկած անձրևից յետոյ եղանակը հովացաւ։

⁂

«Մշակի» այս 16-որդ համարը ուշացաւ, պատճառ որ մենք Ծէրէթէլու տպարանից տեղափոխվումէինք Մէլիքովի տպարանը, որտեղ և տըպվումէ այժմ մեր թերթը։

⁂

Մենք ստանում ենք զանազան քաղաքներից և զանազան դասի մարդիկներից համակրական նամակները մեր 9-որդ համարում տպված «Հոգևորականութիւն և ժողովուրդ» յօդվածի առիթով։

⁂

Ուշադրութիւն դարձնելով արտաքին տեսութեան մէջ տպված թուրքիայի վերաբերութեամբ յօդվածի վրա, աւելորդ չենք համարում աւել թէ Kölnische Zeitung լրագրի խօսքերից երևումէ որ կալանաւորվածների երկուսը՝ թատրօնի դիրեկտորը և «Իբրէթ» լրագրի հրատարակողը հայեր են։ Բայց բոլոր կալանաւորվածներից որք մարտի 28-ին աքսորանք ուղարկվեցան, թուրքաց տէրութիւնը ներեց միայն յիշեալ երկու հայերին

## ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

### ԹԻՖԼԻԶԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ
(Մայիսի 3-ին).

| | | | |
|---|---|---|---|
| ՈՍԿԻՆ, (պօլուիմպէրիալ) | 6 ռ. | 8 | կ. |
| ԲԱՄԲԱԿԸ Երևանու | 4 „ | — | — |
| „ երկրորդ տեսակը | 4 „ | — | — |
| „ Ամերիկայի սերմից | 6 „ | 80 | „ |
| ԲՈՒՐԴԸ Թուշի | 5 „ | 50 | „ |
| „ „ երկրորդ տեսակը | 5 „ | — | — |
| „ Թարեքեամի | 3 „ | — | — |
| ՇԱՔԱՐԸ Ռսի (Բրօցկու) | 7 „ | 35 | „ |
| „ „ միւս տեսակը | 7 „ | 15 | „ |
| „ գազրանիցու տրանցիդ | 5 „ | 10 | „ |
| մաքուր վճարած | 8 „ | 35 | „ |
| ՇԱՔԱՐԱՒԱԶԸ Ռսի | 6 „ | 30 | „ |
| ՂԱՀՎԱ Լիվանի լաւը | 15 „ | 50 | „ |
| ՂԱՀՎԱ Մօխօ, շատ լաւը | 17 „ | 50 | „ |
| „ Մարտինիկոյի, ցածրը | 13 „ | 50 | „ |

| | | | |
|---|---|---|---|
| ԱԼԻՒՐԸ Երևանի առաջին տեսակը | 1 „ | 40 | „ |
| „ „ երկրորդ տեսակը | 1 „ | 40 | „ |
| ԱԼԻՒՐԸ Գեանջու հասարակ | 1 „ | 65 | „ |
| „ Շորագեալու | 1 „ | 65 | „ |
| ԳԱՐԻՆ Երևանի | 1 „ | — | — |
| ՊՂՊԵՂԸ | 11 „ | — | — |
| ՇԻՐԲԱԽՏԻ ձէթ | 8 „ | — | — |
| ՄՈՄ | 13 „ | 20 | „ |

### ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՎԱՃԱՌԱՆՈՑ
(Մայիսի 4-ին)

| | |
|---|---|
| ՓՈԽԱՆԱԿ. բաբաթ պօլս, . . վճա. . . | 6—77 |
| „ „ Թաւրիզում վճա. . . | 4—82 |
| ՄԱՐՍԷԼ և փարիզ, 100 րուբլին աժէ. . | 345 ֆր. |
| ԼՕՆԴՕՆԻ վերա, (Օդեսայի կուրսը) ; 7 րուբլի 34½ կոպէկը աժէ . . . . | 1 լիրա |
| ՄԱՐՍԷԼՈՒՄ բամբակի 50 քիլօ (3 փութ 2 գրվ.) ծախվումէ . . . . | 75 ֆր. |
| ՄԱՐՍԷԼՈՒՄ Երևանու Ամերիկ. սերմի բամբակը ծախվումէ | 95 ֆր. |
| „ առաջին տեսակը . . . | 72½ ֆր. |
| „ երկրորդ տեսակը . . . | 62½ ֆր. |
| ՄԱՐՍԷԼՈՒՄ Թուշի սպիտակ բուրդը ծախվումէ . . . . | 114 ֆր. |
| „ երկրորդ տեսակը . . . | 90 ֆր. |
| „ գառան բուրդը աժէ . . | 123 ֆր. |
| „ Թարաք. բուրդը աժէ | 82 ֆր. |
| „ Ղարաբ. բուրդը աժէ . . | 60 ֆր. |
| „ երկրորդ տեսակը . . . | 55 ֆր. |

ՌԱՇՏ արբեշումի 6 բաթմանը (2 փութ 7 գրվանքայ) 170—180 ղրան (10 ղրանը 3 րուբ. 22 կ.)

ՄԱԶԱՆԴԱՐԱՆ, արբեշումի 6 բաթմանը աժէ 80 ղրան։

ԿՕՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ խարջ Նուխվայ թէլ (մետաքսը) շատ ընտիրը 147 րուբլի։

### ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ։
(Ապրիլի 24-ին)

ԼՕՆԴՕՆ.—մի ռուբլի աժէ 32⅜ պէնս (փոխանակ 40 պէնս).

ՓԱՐԻԶ.—մի ռուբլի աժէ 344 սանտիմ (փոխանակ 400 սանտիմ).

| | | | | |
|---|---|---|---|---|
| Առաջին ներքին 5% փոխառութեան տոմսակ | | | | — |
| երկրորդ | | | | — |
| 5% Բանկի տոմսակ | „ | 1 | շրջանի | 95 |
| „ „ | „ | 2 | շրջանի | 94⅞ |
| „ „ | „ | 3 | շրջանի | — |

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԱՆՈՆԱՒՈՐ ԵՒ ՎԱՅԵԼՈՒՉ ԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ՈՒ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ. (Исторія и теорія каллиграфіи) հանդերձ պատկերազարդ ծանօթութիւններով, յաւելուածներով և գրանմուշներով ու մանրամասն ցուցակներով։— Մ. Ս. Միանսարեանց։— Ս. Պետերբուրգ 1872 թ., 8 ծալ, էջ 274։ Մի օրինակի գինը 1 ր. 70 կ. հինգ օրինակինը 7 ր. 50 կ., ճանապարհի ծախսով միասին։ Նիւթերը § I կանոնաւոր և վայելուչ գրութեան գլուխ գրութիւնը մինչև XVIII դարու վերջը (և տեղեկութիւններ Հայ տպագրութեան մասին 3—8) էջ 1—14։ § II. այս գիտութեան զարգանալը XVIII դարու վերջէն մինչև 1825 թուականը. էջ 14—19։ § III Սորա զատաւորութիւնը մինչև Կարստերը, 19—22. § IV Կարստերի և նորա հետևողների զառածութեան ձեր, 22—26։ § V. Ըմանակով գրել ուսուցանել և մարմնամարզութեան վերաբերեալ գրագիտութիւնը (էջ 37, 59—62 և 122) 26—41. § VI. Հակման եղանակը 41—43. § VII. Դասաւորութեան հիմնական կանոնները 44—52 § VIII. ուսանողների և ուսուցիչների պարապմունքների կերպը և յարաբերութիւնները (248) 58—83։ § IX. Հայ գրութեան պատմութիւնը. ոսկեգիր (83,249), բուն երկաթագիր, միջին երկաթագիր կամ միջակագիր, նօտրգիր, շղագիր, ներքագիր, գլխագիր, կանչակագիր, փառագիր, փակագիր և վարագիր, 33—106. Մեր աշխատութեան հիմունքները և կերպը (249), 107—124։ X. գիրքցական գրանշանները, նոցա նշանակութիւնը, ուղղագրութիւնը և գրագիտութիւնը (124—1—IV, 149—150, 249) 125—144։ Դըպրոցական աւանդապահութիւնը (195, 250, 251) 144—150։ Յաւելուած Ա։ Սովորութիւնների նշանակութիւնը դաստիարակութեան գործի մէջ, 150—178։ Յաւելուած Բ. Զանազան թանաքներ շինելու եղանակներ և համառօտ տեխնիկական բառարան 178—189։ Յաւելուած Գ. Ընտանիքի ախտորոշական հարկաւորութիւնը 190—196։ Յաւելուած Դ. Յառաջադիմութեան և վերջացմանութեան տեղ և Հայերէն բառագրութեան գրագիտութիւնը (208—216) 196—221։ Յաւելուած Ե. Ընտանեկան ատենագիրք (224—1—16—225) և համառօտ բառարան 222—248։

Дозволено Цензурою. Тифлисъ, 4. Мая 1873 г. Մէլիքովի և ընկ. տպարան Խմբագիր—հրատարակող Գրիգոր Արծրունի